ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 10 » օգոստոս 2022թ. No 3651 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԱՐՄԱՏԵՔ ՓԲԸ, 111 ՐԱՖՖՈՒ Փ., ԵՐԵՎԱՆ, 0064 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՖԱՐՄԱՏԵՔ ՓԲԸ, 111 ՐԱՖՖՈՒ Փ., ԵՐԵՎԱՆ, 0064 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ԹԵԼԱՔՍԵԼ ԹԻՄՈԼՈԼ (ԹԻՄՈԼՈԼԻ ՄԱԼԵԱՏ) ԱԿՆԱԿԱԹԻԼՆԵՐ (ԼՈՒԾՈՒՅԹ) 5ՄԳ/ՄԼ; 5ՄԼ ՊԼԱՍՏԻԿԵ ՍՐՎԱԿ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 7-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 28.07.2022 թվականի N 0103092822 բացասական եզրակացությունը՝ Հայաստանի Հանրապետության Ֆարմատեք ՓԲԸ, 111 Ռաֆֆու փ., Երևան, 0064 Հայաստանի Հանրապետություն արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Ֆարմատեք ՓԲԸ, 111 Ռաֆֆու փ., Երևան, 0064 Հայաստանի Հանրապետություն «Թելաքսել թիմոլոլ (թիմոլոլի մալեատ) ակնակաթիլներ (լուծույթ) 5մգ/մլ; 5մլ պլաստիկե սրվակ» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 20814 առ 28.07.2022թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ դեղի փորձաքննության ընթացքում հայտնաբերվել են կայունության և անալիտիկ մեթոդների վալիդացիայի խեղաթյուրված փաստաթղթեր:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Հայաստանի Հանրապետության Ֆարմատեք ՓԲԸ, 111 Ռաֆֆու փ., Երևան, 0064 Հայաստանի Հանրապետություն արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Ֆարմատեք ՓԲԸ, 111 Ռաֆֆու փ., Երևան, 0064 Հայաստանի Հանրապետություն «Թելաքսել թիմոլոլ (թիմոլոլի մալեատ) ակնակաթիլներ (լուծույթ) 5մգ/մլ; 5մլ պլաստիկե սրվակ» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Invalid signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157